

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Յրկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոյար

Վեցամսեայ 1. 50 »

ԿԱՆՈՒԿ

Մանուցման սոյոր
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

„Iraivounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНК“

ВАРНА

Գրութիւնք եւ չին
տրութիւնք

ՅԱԿՈԲ Կ. ՀՃԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կը վաճառէ Սօֆիա քաղաքի
վիճակահանութեան տոմսերը .

Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1.50

ՔԱՅԱՆԱՆԵՐՈՒ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Տիգրիսէն կարգ մը քահանաներ
աղերսագիր մատուցած են Ամե-
նայն Հայոց Վեհ. Հայրապետին,
խնդրելով որ արտօնութիւն տը-
րուի կրկնամուսնութեան քահա-
նաներուն ալ, աշխարհականնե-
րու նման .

Այս հարցը Կովկասահայ մա-
մուլին մէջ լըջօրէն ծեծուիլ ըս-
կած է . Այս տեսակ խնդիր մը
յարուցանելու համար թէեւ տէր
հայրերը շատ անպատեհ ժամա-
նակ մը ընտրեան, երբ ամբողջ
Կովկասահայութիւնը իր ամեն
գաւազաններով գոյութեան կամ
չգոյութեան արհաւիրք օրերու
մէջ կ'ապրի. բայց խնդիրը իս-
կապէս նուազ կարեւոր չէ և կապ
ունի մեր հանրային բարոյակա-
նին ու քահանայական պաշտօնին
նուիրողութեան հետ . Սա ալ
պէտք է ըսել թէ քահանաներու
այս կրկնամուսնութեան խնդիրը
նոր ալ չէ . Ասկէ գրեթէ տասը
տարի առաջ այդ խնդիրը իրա-
նուքի այս սիւնակներուն մէջ
բաւական ծեծուեցաւ, Ռուսչու-
քի Տէր Ղևոնդ քահանայի կրկ-
նամուսնութիւն պահանջելուն առ-
թիւ . Այն ատեն ալ թերու դէմ
կարծիքներ յայտնուեցան հրա-
պարակաւ . շատերու կողմէ մե-
ղադրուեցաւ քահանան, սա պատ-
ճառաւ թէ նա խիստ անպատեհ
ժամանակ մըն էր ընտրած, երբ
Հայաստանի ընդհանուր յարգե-
րուն Կ. Պոլսոյ կոտորածն ալ վրայ
գալով, Պոլսկարիան ողորդած էր
տասնեակ հազարաւոր ու մեծաւ
մասամբ խեղճ եւ թշուառ հայ
գաղթականներէ . Այս ազգային
ընդհանուր ազդեցիկ օրերուն, տէր-

տէրի մը ելլել անպատեհաւ եւ
կնիկ կուզեմ, ըսելը շատերու
կողմէ աշխարհեցաւ . Սակայն
տէրտէրը յամառելով իր պահան-
ջին վրայ, վերջապէս սա վճա-
կան և անպատեհ պատասխանը
ստացաւ Վեհ. Կաթողիկոսէն . Գա-
հանայի մը չենք կրնար արտօնել
կրկին ամուսնանալ . իսկ եթէ
դուք փիղիքական և ընտանեկան
անյաղթելի պատճառներ ունիք
ամուսնանալու, կրնաք ձգել
ձեր սքեմը և մտնել աշխարհա-
կան կեանքի մէջ .

Ամենայն Հայոց Կաթողիկոսը
աւանդապահը ըլլալով մեր եկե-
ղեցական կարգերուն և օրէնքնե-
րուն, չուզեց այն ատեն դէմ բա-
ցառապէս արտօնել տէրտէրի մը
կրկնամուսնութիւնը .

Բայց այժմ խնդիրը հաւաքա-
կան դիմումով մը կը վերյու-
շուի, և հետեւեալ րօրջ հան-
գամանք մը ստացած է . Ապահով
ենք թէ Վեհ. Կաթողիկոսը՝ այս
անգամ մեր ժողովական պատասխան
տալէ առաջ, պիտի հաճի խըն-
դիրը իր բոլոր կողմերով քննել
և ժամանակի բարքի ու կենցաղա-
գիտական բոլոր պարագաները
նկատողութեան առնել .

Նախ թէ՛ քահանաներուն կըրկ-
նամուսնութիւնը արգիւտող օրի-
նակետը մեր եկեղեցւոյ հիմնա-
կան օրինակետերէն մին չէ . հե-
տեւեալ ժամանակի, պարագա-
ներու ու բարքերու պահանջ-
մանց համեմատ օրուան հայրա-
պետը կրնայ զայն բարեփոխու-
թեան ենթարկել, ինչպէս քոյր
եկեղեցիներ նման պարագա-
ներու համար փոփոխութիւն-
ներ ներմուծած են .

Երկրորդ, եկեղեցական օրէն-
քի այդ խիստ կէտի օրէնսդրու-
թիւնը եղած դարուն մէջ, 40
տարին չը լրացնող մէկը քահա-
նայ չէր ձեռնադրուեր . մինչդեռ,
վերջին ժամանակներու մէջ, 27—
28 տարեկան երիտասարդներ
քահանայ կը ձեռնադրուին . և
երբ ասոնք երիտասարդ տարիք-
նուն մէջ իրենց կինը գերեզ-
մանի յանձնելու դժբաղդութիւնը
կուենան, անշարժաւոր զուակ-

ներու մայրական խնամքն ալ ի-
րենց վրայ ծանրանալով, անոնցմէ
ցմահ ամուրիութիւն պահանջել
շատ անբնական և անարդար է .

Երրորդ, երիտասարդ տարիքին
մէջ դժխեմ բաղդի բերմամբ ա-
մուրիութեան դատապարտուած
քահանայ մը բանբասանքներէ ու
չար լեզուներէ զոյւշանալու հա-
մար, հարկադրուած պիտի ըլլայ
թերանալ իր ծուխերը ստէպայ-
ցելու, զանոնք միւթարելու
ու խրատելու պարտականութե-
նէն . իսկ եթէ բանբասանքնե-
րու կարեւորութիւն չաւելով շա-
րունակէ իր այցելութիւնները,
զայլթակութեան տեղի տուած
պիտի ըլլայ, որով քահանային
բարոյական ազդեցութիւնը պի-
տի կտրուի և կրօնքին ու կրօնա-
կանին նուիրականութիւնը պի-
տի աղաքտի .

Չորրորդ, Բրիտանիոյ թեման
ոգույն, և անոր հիմնական սկզբ-
բունքներուն ո՞ր կէտը մեզ կը
հայկադրէ, որ մեր քահանաներէն
հարկաւորներու վրայ կնազդը-
կութեան անբնական ծանր բեռը
դնենք, անոնց պաշտօնին ան-
թերի կատարումը պահանջելով
հանդերձական ջանքեր ըլլանք տե-
ղի կամ անտեղի բանբասանքնե-
րու, ակնառես զայլթակու-
թիւններու և այս ամենէն զատ
ազգը զրկենք ամուսնազուրկ քա-
հանաներու և երէցկիներու ար-
գասիքէն, զոր կրնայ տալ կըրկ-
նամուսնութեան արտօնութիւնը .

Մենք կը կարծենք թէ, եթէ ոչ
աւելի հին, գէթ տասը տարիներէ
ի վեր յարուցուած այս կարեւոր
խնդրոյն օր առաջ լուծումը խնդ-
րարկու քահանաներուն նպաս-
տաւոր կերպով, շատ օգտակար
պիտի ըլլայ ազգին և եկեղեցւոյն
ամեն տեսակետով .

Մեր յարգող բաժանորդ-
ներէն կը խնդրենք որ յիշեն
թէ իրենց բաժնեգիրները չեն
զրկած, և հաճին ջրկել . մանա-
ւանդ անցեալ տարու ընէ պարտք
ունեցողները .

ՕՏԱՐԻՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ գրութիւնը, որ տըպ-
ուած է ծանօթ հայասէր տղթ-
Լեփսիուսի հրատարակած մէկ
ամսաթերթի փետր. թուոյն մէջ,
թարգմանաբար կը հաղորդենք
հայ հասարակութեան շիւտաւն-
քի միջոցաւ, վստահ ըլլալով
թէ անոր ընթերցումը մեզ ինչ
ինչ տեսակետով օգտակար կրնայ
ըլլալ, քանի որ հեղինակը գեր-
մանացի մըն է, որ խոյի մէջ հա-
յոց համար բացուած որբանոցին
արհեստական ճիւղին վարիչն է
և որ անցեալ յունիսին, երբ որ
Երեւանու մէջ մահմետական խու-
ժանը իր բարբարոսական շահա-
տակութիւնները կը կատարէր,
թիֆլիսէն խոյ ճամբորդած է
մեծ վտանգներու տակ . Ասկէ
կրնայ պարզ տեսնուիլ որ հայ
ազգը զերման ժողովուրդին մէջ
ալ իր ջերմ պաշտպանները ու-
նի, որոնք, թէեւ ոչ կառավարա-
կան մարդիկ, հայ ժողովրդեան
արդար իրաւունքները ճանչցած
և անոր անտանելի վիճակին լաւ
տեղեակ են և կուզեն անոր ոչ
միայն մարդասիրական հաստա-
տութիւններով, այլ նաեւ մամու-
լի միջոցաւ պաշտպան կանգնել .
Ահա գրութիւնը .

ԿՈՎԻԱՍԷՆ

Երբ, 1896 թ կոտորածներէն վերջ,
զայրոյթի աղաղակ մը ազմկալից
կերպով անցաւ գնաց Եւրոպայի քա-
ղաքակրթեալ երկրներէն, զժողովու-
րայ ուշ, եւ շատ Եւրոպացիներ ու
Ամերիկացիներ մեծ օգնութեան գործ
մը կատարելու համար հաստատուե-
ցան հայկական երկրներու մէջ,
շատեր կարծեցին թէ հիմա վերջապէս
այս զժողով ժողովրդեան համար
անցած է շարժարանաց ու կարօտու-
թեան, ամենաստորին ծառայութեան
եւ նախատեսաց ժամանակը . Այն ժա-
մանակէն ի վեր ութը տարի անցած
է հիմա, շատ միլիոններ բաշխուած

(*) Բայց այդպիսիներ ամբողջ Գեր-
ման ցեղին մէջ հազիւ մի քանի հա-
տ .

են կարողութիւնը մեղմացնելու, վերջերը բուժելու համար եւ շատ ջանքեր ալ եղած են, այսպիսի զբոսաշրջութեան անհաշիւ կրկնումը արգելելու, որպէսզի դարեւոր թշուառութեան մէջ հեծող ժողովուրդը բոլորովին բնաջինջ չըլլայ: Բայց ինչ որ այս տարուան մէջ հայ ժողովուրդեան գլխուն հասաւ, հեղեղութիւն մըն է լաւագոյն ժամանակներու մասին տածուած ամէն յուսոյ դէմ:

Սոսկալի էին կոտորածները, զորս ութը եւ տասն եւ մէկ տարի առաջ թուրքերոյ հայոց մէջ նախապաշարեալ մահմետական խուժաններ թուրք կառավարութեան աչքերուն առջեւ կատարեցին, սահայն աւելի տխուր, անասելի կերպով դառն է տեսնել, ինչպէս քրիստոնեայ մէկ մեծ պետութիւն մը կախատի բնաջինջ ընել ժողովուրդ մը, որ անոր՝ պատերազմի ծանր ճգնաժամի մէջ օգնած է խնդրոյն վերաբերող երկիրներուն տիրելու: Սարսափները՝ որ ռուս կառավարութեան աչքերուն առջեւ կովկասի մահմետական բնակչութեան ձեռքով հայոց վրայ ի գործ կը դրուին, ներկայ ռուսական պետութեան պատմութեանը մէջ ամենէն աղետոտ գլուխը պիտի կազմեն:

Եւ ինչ է հայոց յանցանքը, ինչ քաղով անոնք մեղանչեցին ռուս պետութեան դէմ որ այսպէս մարդիկ կը փորձեն զանոնք իրր որդիութիւն կոչելու: Մահմետական աւազակներ անոնց դէմ գրգռելով:

Անոնք իրենց ազգային եկեղեցւոյն բռնութեամբ ռուսականացմանը առանց ընդդիմութեան չհաւանեցան, անոնք իրենց դպրոցները փակուելէն վերջ ամէն կերպով աշխատեցան իրենց լեզուն պահելու, ուշիմ երիտասարդ հայեր ռուս ժողովուրդեան մէջ գտնուող զգաւոր տարրերուն հետ դիւրահասկանալի պատճառներով եղբայրացան, վերջապէս անոնք բաւական յանգուզն էին, աւելի յառաջդիմաւոր, աւելի ժիւր, աւելի բարեկեցիկ ըլլալուն քան միւս ժողովուրդները, որոնք տաք կովկասի մէջ աւելի կը նախընտրեն դատարկ պորտ չըլլի: Ասոնք են հայոց մեղքերը, ասոնց համար է որ անոնք պէտք է ջնջուին:

Մահմետական թուրքը եւ քուրդը Հայոց մասին իրենց դատողութեանը մէջ աւելի արդար են քան թէ օրթոտքս Ռուսները եւ բարձրէն դա,

տող Եւրոպացիները: Քիւրդը եւ թուրքը կը կողոպտեն հայը իրր քրիստոնեայ, օրուն քնաշնչով աւելի ծառայութիւն մըն է քան թէ մեղք, որովհետեւ այդ ընելու իշխանութիւն ունին եւ կուզեն անաշխատ հարստանալ, առանց սակայն յանցանք մատուցողութեամբ հայոց վրայ փնտռելու, բայց ռուսը եւ թուրքացին կը փողփող փնտռեն ժողովուրդին չարագանց թշուառութիւնը մեկնել անոր գէշութիւնովը, քանի որ անգամ մը իրենց անձը հանդարտեցնելու համար արդարացի մեկնութեան մը կը կարօտին:

Կովկասի կարգապահութեան պաշտպանները այս անգամ, Պոնտոսի Պիղատոսին նման, փորձեցին առաջի աշխարհի իրենց ձեռքերը լուսլուս մեղմութեան մէջ, բայց ով որ, զայս գորդին նման, յունիսի խոտովութեանց միջոցին կովկասի մէջ ճամբորդած է, ան կրնար ռուսական կեղծաւոր դէմքին ետիք ստորնութեան ամենաստուկային գտնել: Որ որ միշտ աւազակախումբեր հայկական գիւղերը կրակի տուին եւ բնակիչները կողոպտեցին ու սպանեցին, հոն երեւցան նաեւ, ամէն բան լմուլէն վերջ, ռուսական զօրքեր, կամ թէ կոտորածները սկսան այն պահուն, երբ ռուսական զօրքերը իրենց մարդասէր հրամանատարներովը հասան, որպէսզի անխուսափելի գործը ամենայն կարգապահութեամբ յառաջ տարուի:

Ընթացողութիւնը երեւոյն իրօք երեւաւ հուզար, օրինակի աղագաւ, երբ եւ հայոց վրայ յարձակող մահմետականաց մէկ խումբը ցուցնելով ռուս վաշտապետի մը հարցուցի թէ արդեօք ի պաշտպանութիւն յարձակում կրողներու զօրք չպիտի խրկուի, եւ ան ինձի ծիծաղելով պատասխանեց. «այո՛, զօրքերը միշտ մոխ պիտի ըլլան, բայց — միշտ երբ արդէն շատ ուշ է»:

Միացող աւերակներուն, կործանած բարեկեցութեանց վրայ, այրուած, կտոր կտոր եղած հիւկներու քով յետոյ հաւատարմաբար հսկողութիւն կընեն ճգնական ռուս պաշտպանները: Այսպիսի սատանայական կեղծաւորութիւն մը թուրքերուն վրայ իսկ չտեսնուեցաւ:

Ռուսական դէպքերու ազգեցութիւնը դիւրաւ կրնար վտանգաւոր ըլլալ Պարսկաստանի քրիստոնէից

համար: Թափուէի, Ուրմիայի, մահալանդ հոս խոյի մէջ կացութիւնը խիստ տագնապալի էր: Երկու շաբաթ զրեթէ ամէն փամ, կը սպասէին, շաբաթ կուսի փահմետականներէն, որ անտարակոյս տիղի կուսնէն, եթէ ցարսկայան կառավարութիւնը կարելի կը գտնէր մէն քան չը թելադրէր ի պաշտպանութեան քրիստոնէից: Այս պարագային մեր կառավարութիւնը տրամադրուեց մեծ գովութեան, մահալանդ երբ անոր վերաբերումը ռուս կառավարութեան վերաբերումին հետ բաղդատուի: Եղած ջանքերն ալ յաջողութեամբ պատկուեցան, որովհետեւ տեղ մը բազմում մը կարելի չէր: Թէ քաղաքական եւ թէ նաեւ հոգեւոր իշխանութիւնները շատ բան ըրին ծագած թշնամութիւնները զսպելու, փողովուրդը հրահանգելու հանգամանքներու համար: Ասոր հետեւանք այս է որ հիմա պարսկական կառավարութիւնը առաւել քաղաքականացեալ կերեւի, քան թէ ռուսականը: Որովհետեւ ան երկրին հանգստութիւնը պահեց եւ սարսափներու առջեւ առաւ, բան մը զոր ռուս կառավարութիւնը պարզապէս չուզեց ընել:

Թարգ. ՅՈՒՇԻԿ
1906 թ. արտ. 3
Սօֆիա

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐ

Կովկասի հայ-թուրքական համաժողովի երրորդ նիստին մէջ Հայերուն ներկայացուցած ծրագիրը կարգացուելէ յետոյ, թուրք պատգամաւոր Հայիէվը սաւ թէ ինքը եւ ընդհանուր թուրք ժողովուրդը խուժութեանց գլխաւոր պատճառը կը համարեն Հայ Յեղ. Դաշնակցութիւնը, որուն զինեալ մարդիկը աչքի կը դարնէին, անոնք զանազան սպաննութիւններ ըրին եւ սարսափահար ժողովուրդը աւորճանակին ձայնը լսելուն խանդութեամբ գոցելով կը փախչէր, վերջապէս քանի որ կը մը

նաեւ այդ կաղմակերպութիւնները, խաղաղութիւն կարելի չէր ստանալ, Հայիէվ թուրք մը հանեց եւ զօրավար Մալամային յանձնեց. այդ թուրքը «Հայ Յեղ. Դաշնակցութեան զինուորական ներքին կազմը եւ կանոնադրութիւնն» էր պարզապէս թելադրողը:

Հայերու պահանջամբ բարձրագոյն կարգացուելէ յետոյ, նախագահ Մալաման ըսաւ.

— Պարոններ, ինձ ալ յայտնի է որ գոյութիւն ունին կաղմակերպութիւններ եւ թէ պատգամաւորները անկեղծօրէն կը ցանկան հաշտութիւն կապել եւ խաղաղութիւնը վերականգնել, պէտք է որ այդ կաղմակերպութիւնները լուծուին, որովհետեւ զինեալ խուժերը երկրին վրստահութիւն չեն կրնար ներշնչել: Դիմակ միջոցը այդ է:

Նախագահին տոյս յայտարարութեան վրայ բժիշկ Խատիսեան շատ պերճաբար ճառ մը արտասանեց եւ լուր ներկաները հիացուց. ահա այդ ճառին ամփոփումը «Արշալոյս» էն քաղուած:

Հայ ներկայացուցիչները որոշել էին պատճառներ ընտելութիւնը դուրս գրելու այժմ եւ դրանց մասին խօսել, երբ իստուէր միջոցների մասին, բայց չեղաւ. այնօր Զեդր Գեւորգեանցութեան առաջ զրեցին մի գովու, մէնտ եւ մենք դուրս ենք գալու մեր որոշումից, քս ուրախ եմ, որ վերջապէս հարաւորութիւն է տրուում մեզ բոլորից առաջ ասել, պարզաբանել մի բան, որ ամեն քայլափոխում կրկնում է: Սա առաջին անգամ չէ, որ Դաշնակցութիւնը մեղադրում են եւ որ ամենից կարեւորն է միշտ էլ Դաշնակցութեան մասին այնպէս են խօսում, որ ստացւում է այսպիսի պատկեր, թէ Դաշնակցութիւնը՝ դա ինքը հայ ժողովուրդն է: Որովհետեւ դրա մէջ կան խոշոր թիւրմացութիւններ, ուստի եւ ես կանցնեմ այդ հարցին եւ մասնաւորապէս Դաշնակցութեան ծրագրի, նպատակների եւ ծագման պարզաբանութեանը: Թող ամեն ինչ պարզ լինի ձեզ հա-

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ԹԵՐԻԹՅՈՒՆ	
ԳՐԵՑ	ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԼԵՕՆԻՏԱՍ ԱՆԴՐԵԱՎԻՏ	ՍՏԵՓԱՆ ՄՈՍԿԱՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ

— * * * —

(Շարունակելի նախորդ թիւէն)

ՀԱՏՈՒԱՄ Գ.

Ասում են, որ մեր բանակում, ինչպէս եւ թշնամի բանակում, կան բազմաթիւ խնդ մարդիկ: Բացում են չորս յիմարանոցներ:

ՀԱՏՈՒԱՄ Դ.

Օձանման ցանցերով հիւստեւած թելը մեզ չըրկապատել էր: Ես նշմարեցի սըրան եւ ճանապարհ բաց անելու մտք մի հարուածով կտրեցի նրա մի ծայրից: Նա շարունակեց, յափշտակեց երեք զին-

յին թէ որ ուղղութեան պէտք էր դիմել, այդ դէպքը կը վերջանար լոկ փախուստով: Սակայն տաս ու տաս երկու շաբթի վրայ դասուած թէլէցանցերը, նրանց տակի Լարիլիթոսական հոնիաձեւ փոսերը, նրանց իւրաքանչիւրի մէջտեղից անկուած սրածայր ցցերը եւ նրանց գէմ մղուած պայքար իրերի զրութիւնը դարցրեց քառական, այնպէս, որ նրանց համար անկարելի էր զանազան թէ որ կողմից պէտք էր փախուստ տալ: Որ շատեր, կարծես կոյր մարդիկ, գնում ընկնում էին այդ հոնիաձեւ փոսերի, մէջ մուկում սրածայր շամփուրների վրայ, վերջինս նրանց ստամոքսից երկուում էր եւ կռնակից դուրս գալիս, եւ նրանք այդ մուկում դրութեան մէջ գալարւում, շարժւում էին եւ պարզալիս ինչպէս անկրթներ: Նրանք նոր միտած մարմինների ճնշումից խուժւում աւելի եւ աւելի վար չուտով ցցերը արմատից մինչեւ գագաթ յղուում էին մարմիններով եւ ներկա-

յացնում գալարւող արիւնաշաղախ մարմիններին մի զանգուած, ցնած եւ ողջ: Նրանցից ձեռքեր էին պարզուում զէպ ամեն կողմ, մատներ գործում դողալով եւ բռնում ինչ որ հանդիպէր: Այդ ցցերում միանգամ մուկոյին այլեւս անհնար էր ազատուել: Հարեւրաւոր մատներ, ուժեղ եւ կոյր, ինչպէս խեցեգետինի ճիրաններ, պինդ բռնում էին ոտքերից հագուստներից եւ քաշում վար, իրանց վրայ: Միմեանց աչքեր էին պակոււ, դուրս խլում, եւ միմեանց խղում: Որ շատեր կարծես գինով մարդիկ, վազում գրնում էին թիլին բաղնուում, բռնում նրա ցանցերի մէջ եւ սկսում պղաւել մինչեւ մի բարեբար գնդակի իրանց վերջոցները:

«Ընդհանրապէս բոլորն էլ հարած էին կարծես» ասում է նա: «Ոմանք դուրս էին տալիս սարսափելի հայտնաբեր, ծիծաղում էին երբ ուրիշներ գնում բռնում էին ցանցերին, գոռում գոռում եւ ի վերջոյ լոււմ ընդմիջում»:

«Կարմիր Ծիծաղը» ասացի ես:

(Շարունակելի)

մար : Դաշնակցութիւն՝ դա մի խումբ մարդկանց ձեռնդ չէ : Նրանք չեն Դաշնակցութիւն ստեղծել—այլ ինքը կեանքը եւ այն պայմանները որի մէջ գրուած է եղել հայ ժողովուրդը դա-րերի ընթացքում ճանկաստանում : Սուրբանների անմիտ եւ կործանիչ կտուրվարական սխալները : այդտեղ տիրող անտանելի ընթացքը, անտեղա-կան ոտակալի դրուածքները, հպատակ-ները տարրական իրաւունքների բռն նաբարութիւնը—ասա ինչը ստեղծեց հապարակ դուրս բերեց Դաշնակցու-թիւն, որը ? որպէս քաղաքա-կան յեղափոխական մի կազ-մակերպութիւն ցանկացաւ բողոքել այդ բոլորի դէմ եւ բարեփոխելով երկիրն ու պայմանները հնարաւորու-թիւն տալ ժողովուրդին զարգանալ իր նորմալ կեանքով :

Դաշնակցութիւնը թալանողներին, մարդասպաններին մի խմբակ չէ, այլ նա կենդանի բողոքն է ճշուում ժո-ղովուրդների իրաւունքների՝ կոպիտ եւ վայրենի ոյժի ու կոյր քաղաքա-կանութեան դէմ : որ չլիքայն էր տասնեակ միլիոն ազգաբնակչութիւնը Օսմանեան երկիրներում : Դաշնակ-ցութիւնը ստեղծեց ժողովրդից դեռ եւս սրանից 15 տարի առաջ եւ նա գնաց այն ճանապարհով, որ նրա հա-մար բացել էր եւրոպական առաջա-դէմ միտքը մի կողմից եւ Ռուսաց ամենամեծ եւ ազնիւ քաղաքացի-ները միւս : նրա հայրը ինքը Ռուս կառավարութիւնն էր, Ալեքսանդր Բ. մեծ կայսեր ազատարար քաղաքա-կանութիւնը, որ հակառակ Ռուսաս-տանի մերկանտիլ շահերի, ոգեւոր-ւած մարդասիրական բարձր գաղա-փարներով վճռեց իր հարազատ զա-ւտներին ի դէմս իր քաջ բանակի ուղարկել Բալկանեան թերակղզին եւ այնտեղ բոլորական լեռներում կռուել տաճկական ռեժիմի դէմ՝ ա-զատելու ճնշւած, հարստահարուած ռայաններին տաճկական լոյծից : Այդ չարմախ եւ քաջագործութիւնների հերոսներից մէկն է մեր ներկայ փոխ-արքան, որը մասնակից էր այդ կռու-ւում :

Մեծ ազատարար Ռուսաստանին իր հերոս որդոց արեան գնով ա-ջողեց այդ շուղարների վերաբեր-մամբ : սակայն միւս տանուած ժո-ղովուրդներին հնար չեղաւ տալ նոյն-նը, ինչ ստացան թուրքները : ուս-կառավարութիւնը, եւրոպական ինտ-րիզների ճնշման տակ, սկսածայ կանդ առու եւ էրզրումից հանեց իր զոր-քերը : Դրանից յետոյ հայերի դուռ-թիւնը ճանկաստանում դարձաւ ուղ-ղակի գոփային եւ Դաշնակցու-թիւնը որպէս ժողովրդական մի մարմնացեալ բողոք 10 տարի դա-նից յետոյ եկաւ շարունակելու այն շարժումը, որ առաջ էր բերել ինքը Ռուսաստանը : ինչ գաղափարը որ տեղին մեզ Սան-Ստեֆանոյի եւ Բեր-լինի դաշնագրութիւնները իրանց՝ մինչեւ օրս մեռած 16 եւ 61 հորդ յողուածներով :

Այնուհետեւ պ. խտրիստանը մի ջերմ եւ վերին աստիճանի տրամա-բանական յաջողականութեամբ բա-ցատրեց Ռուսաստանի յետագայ քա-ղաքականութիւնը կովկասում հայե-րի վերաբերմամբ, նկարագրեց Գոլի-ցինեան, զգուշի ռեժիմը եւ որպէս նրա գլուխ գործող՝ հայ եկեղեցա-կան կալուածների գրաւումը, որը խորապէս վերաւորեց հայ ժողո-վուրդի սրտի զգացումները, ժողովրդի, որը սովոր էր իր կեանքի քաղաւոր մոմենտներում առաջին թասը դա

ասրկել «ոուս թագաւորի սուրը կըտ-րուր անի» մարդկանքով : Գոլիցինի առջ ոճիքը, որ տրամագծորէն հա-կասում էր Ռուսաստանի ողջ ա-ւանդական քաղաքականութեանը գէ-պի հայերը, ստիպեցին Դաշնակցու-թեանը ժամանակաւորապէս իր զորք գունդութիւնը տեղափոխել Ուղղակի-կաս եւ ահա այստեղ մի շարք գոր-ծողութիւններով բողոքեց այն սոս-կալի եղեռնի դէմ որ գործեց լանցա-գործ Գոլիցին մեր վերաբերմամբ, եւ փառք Ուստոյ-Թագաւոր կայսրը հասկացաւ իր ստորաքարչ ծառայի ոճրագործ ծառայութիւնը, եւ ընդու-նելով Գոլիցինի հրաժարականը, ուղ-արկեց մեզ մի մարդասէր փոխարքայ Վորոնցով-Դալկովին, վերադարձնելով մեզ այն, ինչ որ խլւած էր այնպէս անարգար կերպով : Մեղում սկսուե-լու էր Դուր կեանք : նոր արշալոյս, սակայն շար ձեռքով 10 տարի ցա-նած ուրմները սկսել էին իրանց պը-տուղիքը տալ : Նակաչիճէն եւ նրա նմանները չէին կարող հաշտել քա-ղաքականութեան, փոփոխութեան հետ արդարութեան այս մեծ ակտի եւ նրանք առաջ բերեցին այն սոսկա-լի հրդեհը, որ հայ-թուրքական ընդ-հարուսմիք էր կոչուում : նրանք օգտու-ւեցին թուրք տաքի տգիտութիւն-նից եւ պրոֆակտորական իրանց գոր-ծունեութեամբ այդ երկու հարեւան միջեւ օրս համեմալի ազդերին մի մեանց դէմ դիմեցին : Այս պալատի պատերն լուս վկաներն են այն զազ-րելի միտումներին, որ յղանում էին նրա մէջ, իմէ սրանք լեզու ունենա-լին, սրանք մեզ կը պատմէին այն ոճրագործ ծրագիրների մասին, որ գծում էին սոսկեղ : Սկսեց հրդե-հը եւ հայ Դաշնակցութիւնը եկաւ պաշտպանելու հայ չիքականի խա-ղաղ կուլտուրական կեանքը ստեղծած ասրիների ընթացքում շնորհիւ հերո-սական ջանքերի, գոհողութիւնների նա եկաւ ստանձնելու այդ գերը որ պարտական էր կատարել իշխանու-թիւնը : Պ. Հաջիբե որպէս մի գաղա-նիք, մի նոր յայտնութիւն է յիշում հայ գիտնորներին, Դաշնակցութեան ջանքիդայններին : բայց մի՞թէ դա գաղտնիք է, մի՞թէ դա ծածուկ էր, ոչ, դուք ինքներդ Ձերդ Գերագոյնցու-թիւն, Ձեր աչքով տեսաք այդ քաջ գիտնորներին Գանձակում, տեսաք զը-րանց նահանգապետ Բաւուջ այստեղ—Թիֆլիսում, երբ հայ գիտնորները գիտնում հրաշալի մազգէյներով ուս գիտնորների հետ միասին դի-քերն էին պաշտպանում եւ կրակ էին բաց անում շարամիտների դէմ : Դան-ձակում Ասլանդուզեան սպանեցին էին, որ արեան եւ բոցերի միջից փրկում էին մանուկներին եւ կանանց : զը-րանք ինքնապաշտպանութեան կազ-մակերպւած հերոսներն էին, որ հր-րապարակ էին եկել : իմացք որ հայ Դաշնակցութիւնը երբեք, երբեք չէ եղել թուրք ժողովրդի, թուրք մաս-սաների թշնամի : ընդհակառակը նա ազգերի եղբայրութեան գաղափար տարածող կարապետն է եղել—նա աւազակային մի կազմ չէ, այլ քա-ղաքական մի կուսակցութիւն, իր վեհ նպատակներով, թող այդ իմա-նան ակադեմիական նշաններով իրենց կրծքերը զարդարող յարգելի թուրք պատգամաւորները : Սակայն այն լու-պէնց, երբ իշխանութիւնը թողած այս եւ այն գիտնորները կը մտնի իր իսկական դերի մէջ, երբ նա իր ձեռքը կաննի արդարութեան սուրը եւ կը պաշտպանի աշխատաւոր մասսաների գոյքը, կեանքը եւ կը տալ նրան

իսկական ապահովութիւն, այն ժո-մանակ Դաշնակցութիւնը կը գնայ իր իսկական ճամբով, որից դուրս բե-րեց նրան հայ-թուրքական կռիւ : Հոկտ. 17 ի ազատութիւնները ուրիշ գէնք են պահանջում մեզից—բա-ցէք նրա համար ճանապարհը, թո-ղէք որ կեանքը գնայ իր նորմալ տեմ-պով, իրագործեմէք իրականութեան մէջ ազատութեան սկզբունքները եւ մինք կը դառնաւք իսկական ազատ քաղաքացիներ—եւ Դաշնակցութեան դերը այստեղ տարածուած կը լինի : (Ծափահարութիւն եւ գոհունակու-թեան օացագանչութիւններ)

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՓԷՆ

1906 փետր. 7 Գէմախ
Վարի-Բագարիճ գիւղ

Սիրելի եղբայրմ

Սիրակցորդ եղբայր, թէեւ առաջէն գրած էի որ գաս, բայց չի գաս ամենե-ւին, չը սխալիս : ինչու որ եկողներէն շատ քիչերը միայն կազատին, միւսնե-րը եւ կը դարձուեն ճրագիւղէն, քանի մը ամիս բանտարկելէ յետոյ, եւ շատ մը գրամ չորթելէ յետոյ, թող կուտան, ինչպէս որ մէկ քանիներու մեր գիւղէն ըրին, նոյնպէս Հաղարքին գալողներուն, նոյնպէս Վերի գիւղ, նոյնպէս Վանք, նոյնպէս Մարէք եւն : Վերջապէս կը խղրեմ գրածներս իմա-ցէք եւ ըստայնմ կարգադրեցէք :

Սիրելիս թէեւ մանրամասնութիւն ուզած էի որ անցելոյն դէպքին վրայ : բայց կը զգեմանկիմ մարածանութեան մտնելու, ինչու որ շատ նաւակներ կը բանան Գեմախ եւ Պոլիս : Բայց վախին չը նայելով միայն սա կարճ գրութիւնս պիտի տամ քեզ, որպէսզի չը սրդողիս :

Յունվար 3)-ին քանի մը քիւրտեր թուրք գիւղացիներու միասնալով եկան գիւղիս Բողոքականաց եկեղեցին երե-կոյին ասին : եւ արարողութիւնը վերջանալէն յետոյ գանձապետէն դրած ուղեցին, նոյնպէս հոգարածութեան, բայց անոնց կամքը անկատար—մնաց : շատ մը հայհոյութիւններ ընելէն յե-տոյ, ժողովարանէն ելան դուրս գը-լուխնին շարժելով, եւ դիմեցին դէպի լուսաւորչականաց եկեղեցին եւ շատ խիստ կերպով ուղեցին 1000 դահեկա-նը, իմէ ոչ հաղարքին տեղ տասը հա-զար պիտի առնուին ըսին : Բայց գան-ձապետը երկար կոճի չընելու հա-մար 50 դահեկան առաւ որ երթան «տէֆ» ըլլան : Բայց անոնք խօսքեր-նուն վրայ կենալով ուղեցին ըսածնին : ժողովուրդը պատասխանեց թէ դրամ մը անգամ չպիտի տամք : այն ժամանակ վայրենիները քանի մը ապտակ գար-նելով գանձապետին ըսին կեալուրին խօսքը չպիտի ըլլայ : այդ պահուն լուր ժողովուրդը թափեցաւ վրանին եւ գա-նոնք լաւ մը ծեծելէ յետոյ դուրս վը-որնտեց : ասիկայ ձեզի սուղի պի-տի նստի ըսելով գացին : Երեք օր չանցած նորէն եկած էին եւ կը պը-տըտէին գիւղը, նոյն գիւղերը որ շատ միթութեան մէջ կը գտնուէր : մտած էին բողոքականաց եկեղեցին ու սըն-տուկը կոտորելով գրեթէ 20,000 դահե-կան գողցեցին, ելելով անկից գացեցին եւ լուսաւորչականաց եկեղեցին առա-ջին դուռը կոտորելով մտած են եկե-ղեցիներն բաղը, բայց իզուր : երկրորդ դուռը շատ աշխատեցին, բայց տե-կրցեց կոտորել որ մասնան ներս : չորս կողմերին նայելով միայն մէկ թիւնէ-քէով կազ գտած են եւ վայրենաբար,

կտած են բակին չորս կողմը ցանցու-կել բռնկեցուցելու համար : Բայց բարե-քաղաքար մարդ մը տեսնելով որ ա-հագին բոց կելլէ, կերթալ լուր կուտայ բարեկամաց եւ ազգականաց, եւ իրաւի երբ կերթան կը տեսնան որ կէսը այ-րուած է : Բայց խիստ եւ չարաչար աշխատութեան մը շնորհիւ կը մարեն : Կղերը հիմակու հիմա հանդարտ են, ինչու որ անոնց գլխաւորը խոստա-ցեց է հանդարտեցունել գայմագայմին առջեւ որ իրենց ընկերները բանտէն հանէ :

ՌՈՒՄԱՆԱՀԱՅԵՐԸ

Կալացի հայոց եկեղեցւոյն մէջ երկար ժամանակէ ի վեր պաշ-տօնավարող Տ. Ղեւոնդ քէնյ. ֆա-փազեանի դէմ մաս մը ազդային-ներ տարերներէ ի վեր խուլ պայ-քար մը կը մղէին զանի այդ քա-ղաքէն հեռացնելու համար : Գա-հանան իր ճարպիկութեան հետ բաւական ալ պաշտպաններ ունե-նալով, յաշողած էր մինչեւ ցարդ մնալ հոն իր պաշտօնին մէջ եւ պայքարը շարունակական ընել, ի միտս տեղւոյն եկեղեցւոյն եւ հայ հառարակութեան :

Այսօր մեզ զրկուած հրաժարա-գրի մը պատճէնէն՝ որ հետեւեա-լուն է, գոհութեամբ կը տեղեկա-նանք թէ Տէր Ղեւոնդ հայրը վերջապէս հաճեց է հրաժարիլ կռիւը մարելու համար :

Կալաց 19 փետ. 1906

ՀՐԱԺԱՐԱԳԻՐ

Տնար Նախագահ հոգարածութեան Ս. Եկեղեցւոյս ի ֆաղաքիս

Նկատելով որ Ս. Եկեղեցւոյս արդի կացութեան բարեկրօնը առանց դո-հաբերութեան չէ կարելի գլուխ տանել : Նկատելով որ իմ պաշտօնավարու-թիւնս (ոմանց կողմանէ) իրեւ արգելք ցոյց կը տրուի բողոքացեալ բարեք-ման հասնելու :

Նկատելով որ հանրութեան օգուտը ահամեմատ առաւելութեամբ գրա-դաս է անհատականէն :

Ընդունելով որ գոհաբերութեան մեծ օրինակը Գրիստոս ցոյց տուաւ իր Ան-ձը խաչին վրայ գոհելով :

Ստորագրեալս ալ իբրեւ ամենայն-տին պաշտօնեայ նորա հիմնած Ս. Սե-ղանոյն, հետեւելով իրեն առաջնորդած ուղիին, եթէ ոչ անձս, այլ ի՞նչ հա-մար գէթ անոր չափ արժէք ունեցող պաշտօնէս հրաժեշտ կուտամ, զոր տան հօթ տարի խղճի մտքը վարած եմ ա-նարժանաբար :

Եթէ իմ անձս ազգային նաւուն վնաս հասցնելու պատճառ կը նշմարուի չա-չըս ոմանց միայն), առանց ուրիշ ծան-րութիւն տալու Յովնան մարգարէի նը-ման հս անձամբ ծով կը նետուիմ, միայն թէ ազգային նաւուն վտանգ չհասնի :

Յիրաւի ցաւալի է ինձ որ պաշտօնա-վարութեամբս չեմ կարողացած օգ-տակար հանդիսանալ : սակայն կը միե-թաբուիմ այն յուսով, որ գէթ հրա-ժարելովս նոյն ծառայութիւնը լիովին փոխարինած լինելու գիտակցութիւնն կուենեամ :

Աստուածն սիրոյ եւ խաղաղութեան
միշտ ընդ ձեզ եղիցի .
Անարժան աղօթարար
Հրաքարեալ պաշտօնեայ Ս. Աստուա-
ծածին եկեղեցւոյ
Ղեկի՛ՈՒՆՔ՝ ՔՀՆ. ՓԱՓԱՋԵԱՆ

Մինչեւ Մայիս ամսոյ վերջ հոս կը
պաշտօնավարէ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպօլտուքի էճնէպի էլի-
ւէրի Պապը Ալիյէ այնը մաալ-
տա նօթալար վէրուպ, պիր Պէլ-
ճիգալընըն եւտի իտարէսինտէ
պուլընան «Բէրա բալաս» նաւ
օթէլտէն՝ սէֆարէթխանէտէն
պիր մէմուր պուլընմատըղը հալ-
տէ՝ Սճէմ թապասը Մ. Շիրազի
նին տէրտէսթիէ հապս օլընմատը
գաբիթիւլասիւնլարա մուխալիֆ
ատտ իտուպ, բրօթէսթ իթմիշ-
լէր տիր :

—Երւոյդ սէրայը ճիվարըն-
տաքի ասքէր գըշլարարընտա
սաքին օրտսւի խասսա ասքէրլէրի
էքսէրիյէթլէ Արնապուտ վէ Ա-
րապ օլուպ, պէյիւնլէրինտէ զալ-
զա զուհուրի իլէ՝ պիրպիրէրի-
նէ գարըն թիւֆէնկէ տալրան-
մըշլար. նիհայէթ բաշլար վէ
եապէրլէր եթիշուպ թէսքին
իթմիշլէր :

Ալպանիսաաքի Արնապուտ իս-
թիւլարը երւոյդտաքի արնա-
վուտ ասքէրլէրին տախի թահ-
րիգ իթմիշ օլմաղլէ, տահա պէօ-
յիւկ իսթիւլարտան գօրգուլըն
Սթանպօլտան պիրտիրիյօր :

—Էտիրնէ վիւլայէթինտէ եէ-
նիտէն գօմիթա չէթալարը կէօ-
րիւնմէյէ պաշլամըշլար. իւշ
չէթա տօլաշմագտա ըմըշ :

—Թէգաիւտ ալլըղը ալան
գաալընարտան 200 քիշի բարա-
լարը վագթընտա էօտէնիլմէտի-
կի սէպէպլէ երւոյդ սէրայը էօ-
նիւնէ կիտուպ նիւմայիշ իթ-
միշլէր. Սուլթան հէր նէ գա-
տար մարտ ալընտան իթիպա-
րէն թէգաիւտ ալլըղլարը վագ-
թընտա էօտէնիլմէտիկին տայիւր
խապէր կէօնտէրմիշ իսէտէ,
գուրու վաուլար գարըն տօյուր-
մաղ տէյուպ, էլիւլէրէ միւրա-
ճաաթ իտէճէլլէրին(Վ) վէ քէն-
տիլէրի 50-60 սէնէ էվլէլքի գա-
տընլարտան օլմատըղլարընը
սէօյլէմիշլէր :

—Սինօրլարտան չէթալար կէ-
չիւլմէք իշիւն Պապը Ալի Սօ-
ֆիա, Աթինա չիւքիւմէթլէրինէ
նօթալարլէ միւրաճաաթ իթմիշ
վէ պիր նէվ թէէմինաթ ալմըշ
իսէտէ, թէքար Մաքէթնիա
տախիլինտէ չէթալար կէօրիւն-
մէքտէ օլտըղընտան, սինօրլարը
կիւզէլ մուհաֆազա իթմէք իշիւն
թիւրքիա սինօր ասքէրլէրինի
արթըրաճաղ ըմըշ :

—Եունան հիւքիւմէթի թիւր-
քիւնըն նօթալար իւզէրինէ, իքի
չէթա րէյիւլէրի թուլմուշ տըր,
պուլար չէթալար թէշքիլի իլէ
եազըն կիւնտէ թիւրքիայա կէչ-
մէք թէտպիրինտէ իմիշլէր. սի-
լահլարընը տախի հիւքիւմէթ
էլլէրինտէն ալմըշ տըր :

—Կէչէն հաֆթա Սթանպօլտան
վէրիլէն հապատիս իւզըն, Աճէ-
միստան իլէ միւնազաա ալլմըն-
տա օլան արաղիտէն թիւրք աս-
քէրլէրին կէրի չէքիւմէսինի
Սուլթան էմր իթմիշ իտի : Պա-
գաթ պու տէֆա թէքար Սթան-
պօլտան պիրտիրիլտիկինէ պինա-
էն, թիւրք ասքէրլէրի տիկէր
պիր թագըմ եէրլէր տախի զապթ
իթմիշլէր. շու հալտէ թիւրքիա
վէ Աճէմիստան պէյնիւնէքի
կէրկինլէք արթմըշ տըր :

Ա Ր Ա Պ Լ Ա Ր

—Պէրուլտա խրիսթիանլարա
գարըն Արապ հարէքէթի եէ-
նիտէն պաշ կէօթէրմէկէ պաշ-
լամըշ : Խրիսթիանլարտան պիր
գաշ քիշի էօլտիւրիւմիշ. խրիս-
թիան թիւճարլարա տախի թէ-
ճալիւլաթ վուգու պուլմուշ :

Եէմէնէ ասքէր կէօնտէրմէք ի-
շիւն Սէրասքէրտէ չօգ շալըշը-
լէյօր վէ 12,000 քիշի Եէմէ-
նէ կիթմէք իշիւն եօլա չըգմըշ-
լար տըր : Պաղտատտան պիրտի-
րիլտիկինէ պինաէն, օրտուտան
գաչան ասքէրլէր օլ թարաֆիւ-
րա կիտուպ հայտուլըղ իթմէք-
տէ իմիշլէր :

—Սթանպօլ 6 մարտ— Արա-
պիստանտան ֆէնա հապատիւլէր
կէլիյօր. Եէնիտէն պիւթիւն Հի-
ճաղ էհալիսի գալգըմըշ. աս-
քէրլէր տախի թաճիլլիք կէօ-
թէրմէքտէ տիրլէր. պիր թագըմ
ասքէրլէր իսէ օրտուտան գաչի-
յօրլար : Կէչէն սէնէ Բիգա բաշա-
նըն 9 թապուր ասքէրի ասըլար
թարաֆընա կէչմիշ իտի : Թէք-
րար կէչէրլէր տէյիւ գօրգու
վար տըր :

—Սթանպօլ 6 մարտ— Պաղ-
տատ վիւլայէթինտէ գարընըղը
արթմագտա տըր. վիւլայէթին
պազը թարաֆլարընտա բսեան
պաշլամըշ աըր, վէ պիր Շէյիսին
գօմանտաալ ալթընտա պուլընան
Արապլար թիւրք ասքէրլէրի տա-
ղըթմըշլար :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Ինկիլթէրանըն Գանուըն Էսա-
սիսինի վէ Բարլըմանընը թէֆ-
թիշ վէ թէտգըղ իթմէք իշիւն
Լօնտրայա մէմուրլար կէօնտէրիւ-
միշ տիր. պուլտան էվլէլ այնը
մէմուրիյէթլէ Պէրլինէ տախի
պիր գաշ մէմուր կէօնտէրիլմիշ
իտի :

—Տուճա ազալարընըն ինթի-
խապլարընտա հագսըղըղլար վէ

ուկունսըղըղլար վուգու պուլմա-
մագ իշիւն տախիլիյէ նէգարէթի
պիւթիւն միւթէսարթլարա (կու-
վէրնէօր) էմիրնամէլէր Եօլլամըշ
վէ մուխալէֆէթ իտէնլէրին ճէ-
զալանմասընը էմր իթմիշ տիր :

—Եահուտիլէրէ վէ սէրպէս-
տիլէթ բարթիլէրինէ գարըն
թէճալիւլաթա վէ հիւճուճա
հազըրլանան Վրու էհալի իթ-
թիհատըր նաւ ֆըրգայը վէ օլ
մագսէտլէ թէշքիլ օլընակէլէն
տիկէր թէշքիւլաթը պօզմագ վէ
տաղըթմագ իշիւն հիւքիւմէթ
չիտիտ էմիրլէր վէրմիշ տիր :

—Սօսիալիսթլէրտէն վէ իս-
թիւլաճըլարտան մատպտա, սէր-
պէստիլէթ, Եանի լիպէրալ մագ-
սէտլէրի իլէ պու կիւն պաշլը-
ճա իքի բարթի թէշքիլ օլընմըշ
տըր, պիրի Վիէմօկրատ—գօնթի-
թիւսիօնէլ տիկէրի «հօկտ» 17
բարթիսի» իսմի իլէ :

Իշպու եէնի բարթիլէր հիւ-
քիւմէթտէն թանըլմըշ օլուպ,
Բուսիւնըն հէր պիր քէօշլէրին-
տէ քէնտիլէրինէ հէմէֆքեարլար
արթըրմագ վէ Տուճա իշիւն է-
հալիտէն չօգ րէյ գաղանմագ
զայրէթինտէ տիրլէր վէ պու
մագսէտլէ քէօյլէրտէ րէսալէլէր
տաղըտուպ, քէօյլիւլէրի քէնտի
բարթիլէրինէ ճէլպ էյլէմէք ի-
շիւն հէր պիր իգտամաթտա պու-
լընիյօրլար. Պագաթ ճահիլ վէ
ահմագ քէօյլիւլէր իսէ անլէրի
իսթիւլաճը (յեղ) զանն իտուպ
հիւքիւմէթէ իսպար իթմէք վէ
Ջարա արզը սատագաթ էյլէմէք
իշիւն չէհիլլէրէ մուրախալար
Եօլլալուպ, «պիլ հիւքիւմէթտէն
այրըլմայըղ, շու ֆէստաճըլարը
գըրըն, գօլմուշ» կիպի պէյանաթ-
տա պուլընիյօրլար : Կուվէրնէօր-
լէր քէօյլիւ էհալի թէսքին
իթմէք իշիւն մէգքիւր բարթի-
լէրին իսթիւլաճը օլմատըղլա-
րը վէ հիւքիւմէթտէն մէգունի-
յէթլէրի օլտըղընը անլաթմա-
յա մէճպուր օլիյօրլար :

Պու խուսուստա Թաւն ըն մուխ-
պիրի տէյօրքի՝ ճահիլ էհալիսին
պու տէրէճէ հիւքիւմէթին գու-
ճաղընա ալթըմասընա սէպէպ
դեկտեմբեր տյընտաքի թաթիլի
ուճուճի օլմուշ տըր. պուլուն մէ-
սուլիլէթի սօսիալիսթլէր վէ իս-
թիւլաճըլար իւզէրինէ համ օլը-
նըր. զիրա պուլար քէնտի թէտ-
պիրսիլ հարէքէթլէրի իլ է հէմ
քէնտիլէրինի էղտիլէր վէ հէմ
տէ էհալի իքրահ իթտիրուպ
տէհչէթէ իլգա իթտիլէր. Շու
հալտէ Բօք Կաթօնըն էֆքնարը
այնէն թաաալի օլընտը :

—Թէնէրալ Սախարուլը գաթլ
իտէն գաաթն էօլիւմէ մահքիւմ
օլտու : Պագաթ մահքէմէ մուէպ-
պէտէն քիւրէք ճէղասընա թահ-
վիլիսի րէճա իթմիշ տիր :

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա


Կապիսիատա Էրմէնիլէր վէ
թաթարլար պէյնիւնէքի միւ-

սատէմէլէր պաաալըրըլմըշ տըր :
Թիֆլիստէ Էրմէնիլ—Թիւրք գօն-
թէրանսը պիր չօգ նօգթալարտա-
իթիւլաֆ հասըլ իթտի իսէտէ, է-
հէմմիշլէրի օլան կէօշ մէսէլէսի
էյան հալլ օլընմամըշ տըր :

—Էլան հայտուլըղա տէվամ
իթմէքտէ օլան վէ Բուսլարա
տախի թէճալիւլաթ պուլընան
պազը թիւրքլէր սէպէպի իլէ
պիր գաշ քէօյլէր թօրա թաւ-
թուլմուշ տըր : պուլտան էվլէլ
պիր գաշ էրմէնի քէօյլէրի տա-
խի թօրա թուլթուլմուշ ըտը :

ՊՈՒԼԿԱՐԻԱ ՎԷ ՍԵՐՊԻԱ

Իքի հիւքիւմէթ պէյնիւնտէ
մուգարէր օլտըղը խիւլաֆընա
օլարագ, պու կիւնէ գաաար կէօմ-
րիւկ իթթիհատ ճէտլէլի Ս. քուպ-
չինայա իպրազ օլընմամըշ օլմա-
սընտան, պուլկար կուգէթալարը
պահս իտէրէք, տիյօրլարքի՝ Սեր-
պիա իլէ կէօմրիւք իթթիհատը-
մըղ պիր տէրէճէ սուլա տիւշիւշ
ատտ օլընպիրի իսէտէ՝ իլէ-
րիտէ պուլկար վէ սըրպ հիւ-
քիւմէթլէրի պէյնիւնտէ չէղիւմէղ
վէ պօզուլմագ պաղլարլէ իթթի-
ֆագ ու իթթիհատ հուսուլա կէ-
թիւմէք իշիւն հէր իքի միլլէթ
զայրէթտէ գուսուր իթմէյէճէք
տիր :



ՏԻՔԻԾ ՍՍՔԻՆԱԼԱՐԸ

ԱԼԵԱ ՎԷ ՈՒՃՈՒՉ

Գատընլարա, գօնտուրաճըլարա վէ
թէրգիլէրէ մախսուս էնվաի տիքիշ
մաքինալարը վաճառ վէ Բրօվատիա մա-
նիֆաթուրա մաղազալարըմըղտա մէվ-
ճուտ օլուպ, ֆիսթճա պաշլալարըն-
տան 100 տէ 30 նօգսան սաթմագտա
օլտըղմըղ կիպի, միւլթէրիլէրէ սու-
հուլէթ օլմագ իշիւն՝ հաֆթատա 2-3
ֆրանկ էօտմէք շարթը իլէ վէրէսիլէ
տախի վէրմէքտէյիլ :

Սաթմաղըմըղ մաքինալար գաղաֆ-
սապթիւնըլար իսէ մայլթիմիլաթ
պուլընան մահիւր մաքինաթ Մ. Յով-
հանէս Շիրինեան կիտուպ մէճանէն
թամիր իտէր վէ աճէմիլլէրէ էօյրէտիր
Գէգա էսկի մաքինալար սաթըն ա-
լըր վէ Թրաքա իտէրիլ :

Վէրմէքտէ օլտըղմըղ շու սուհու-
լէթլէրտէն պիլ իսթիֆատէ ալեա վէ
ուճուղ պիրիւր մաքինա սահիպի օլ-
մագ արզու իտէնլէրի էլ հէր ճիւլէթ
խօշուտ պըրագաճաղըմըղ վատ էյ-
լէրիլ :

ՄԻՐԱՅԷԼ Ս. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ

(Ձիշէքճի օղլու)

Պալքանըլար Ն. 233

Одговорникъ А. Курбетиянъ

печатаѣтъ а Д. Тодоровъ и С-не—Варна.